

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
ՀԱՅ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՆԱԼԻ
ՏԻՊԱՐ ԳԻՒՂԻ ՄԸ ԾՐԱԳԻՐԸ



Ե. Գ. ԱՂԱԹՕՆ


(Հ Ո Ղ Ա Գ Է Տ)

Փ Ո Ւ - Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԳՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր

ԵԳԻՊՏՈՍԻ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ



Բ Ա Ր Ի Ջ

1926

Handwritten signature or mark

04 AUG 2010

63 (47-325)

Ա-43

63
47-43 48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀԱՅ ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՅԱՏԿԱՆԱԼԻ ՏԻՊԱՐ ԳԻՒՂԻ ՄԸ ԾՐԱԳԻՐԸ


Երկու տարի առաջ «Հայաստանի վերաշինութիւնը» անունով հրատարակած փոքրիկ երկիւս մէջ շեշտած էի զիւղական տներու շինութեան անհրաժեշտութեան մասին. այն ժամանակ, ինչպէս նաև այժմ, ներդաղթի և մանաւանդ Թրքահայաստանէն վտարեալ հայ հողագործ զիւղացիներու Հայաստանի մէջ տեղաւորման խնդիրը օրուան հրատապ հարցերէն մին կը մնայ:

Արդէն, զանազան Միութեանց կողմէ գլուղեր շինուիլ սկսուած է Հայաստանի մէջ, և շատ հաւանական է, որ ուրիշ նորանոր Միութիւններ, կամ հայ հարուստներէն ոմանք միեւնոյն գովելի բաղձանքն արձանան: Ուստի կը փափաքիմ հայ հասարակութեան ներկայացնել թէ ինչպէս կարելի է

4280 326
082 47

454

6588



Տիպար գիւղ ձը շինել, և աղէտներէ ու տառապանքներէ մէջքը կքած հայ զիւղացիին համար բարւոք վիճակ ձը ապահովել:

Երեւակայենք որ մէկը 24 տունէ բաղկացեալ գիւղ ձը շինել կը փափաքի. տեսնենք թէ ինչպէս պէտք է կազմուի այդ գիւղը:

1.— Ամէն տուն պէտք է ունենայ խոհանոց ձը, 2 ննջասենեակ, հատիկեղէններու շտեմարան ձը, ախոռ ձը, ձմրան խոտն ու յարդը դնելու մարագ ձը, սայլատուն ձը, (Hangar) երկրագործական գործիքներու համար, և պէտքաւորան ձը:

ա) Խոհանոցը, որ թէ՛ ընդունելութեան եւ թէ՛ աշխատութեան կը ծառայէ, զիւղացիի ձը համար ամենակարեւոր մասն է, ասոր մէջ պէտք է գետեղուին վառարանն ու ջուրի ձորակը: Մեծութիւնը պէտք է լինի 4 մէթր խորութիւն, 5 մէթր լայնք և 3 մէթր բարձրութիւն:

բ) Իւրաքանչիւր ննջասենեակ պէտք է ունենայ 4 մէթր խորութիւն, 3 մէթր լայնք և 3 մէթր բարձրութիւն:

գ) Շտեմարանը պէտք է ունենայ 4 մէթր խորութիւն, 4 մ. լայնութիւն:

ԾԱՆՕԹ.— Այս երեք բաժանումները պէտք է հողին առնուազն կէս մէթր բարձր շինուին:

դ) Ախոռը պէտք է ունենայ առնուազն 5 մ. լայնութիւն և 4 մ. խորութիւն, որպէս զի կարողանայ պարունակել 2 մեծ կենդանի, 2 այծ կամ 2 ոչխար, 1 էջ կամ ջորի և 1 խոյ:

ե) Մարագը պէտք է ունենայ 3 մ. լայնութիւն, 4 մ. խորութիւն:

զ) Սայլատունը (Hangar) պէտք է ունենայ 4 մ. լայնք, 2 մ. խորութիւն:

է) Բնակարանը պէտք է ունենայ 100 քառակուսի մ. պարտէզ ձը, ուր անեղիք կարողանան ձշակել պէտք եղած բանջարեղէնը և տնկել ձի քանի պտղատու ձառեր:

ը) Եթէ զիւղը ելեկտրակայաններու մօտ է և կամ հնարաւորութիւն կայ, ելեքտրական լոյս պէտք է գործածուի բոլոր բաժանումներուն մէջ և հաղորդակցութիւն ունենայ թէլեֆօնով մօտակայ քաղաքին հետ:

թ) Բացարձակապէս պէտք է արգիլել փոստային ելած աղբը պարտէզին մէջ հաւաքելը. պէտք է պարտաւորել գիւղացին որպէս զի կենդանեաց աղբը գիւղին մօտ, իւրաքանչիւր ընտանիքի յատկացեալ մասնաւոր բաժնին մէջ դնէ:

Այս նպատակաւ, գիւղէն դուրս, հում կղմինտրէ պատ մը շինելու է 75 մէթր երկայնութեամբ, և 2 մէթր բարձրութեամբ որ պէտք է ունենայ 24 բաժանում, 3 մէթր լայնքով և 4 մէթր խորութեամբ: Այս կերպով, թէ գիւղացւոց առողջապահական կենցաղին նպատած կ'ըլլանք և թէ աղբը երեք պատի մէջ գտնուելով իր զօրութիւնը կը պահէ:

2.— Գիւղը պէտք է ունենայ մատուռ մը, ուր պարտաւոր պիտի ըլլան զալ գիւղացիք կիրակի օրերը իրենց ընտանիքներով գէթ մէկ ժամ եկեղեցական արարողութեանց ներկայ ըլլալու համար: Մատուռը պէտք է ունենայ իր քահանան, որ կրնայ պարագայ ժամերուն ալ հողագործութիւն ընել:

3.— Գիւղը պէտք է ունենայ զարոց մը 4 սրահով, երկուքը աղջկանց, երկուքը մանչերու:

Իպրոցը պէտք է ունենայ մարմնամարզական պարզ գործիքներ, որպէս զի աշակերտները կարող ըլլան մարմնամարզութիւն ընել:

Իպրոցին սրահներուն մէջ պէտք է գտնուին իրադիտական պատկերներ, և հասարակաց սրահը պէտք է ունենայ ոգելից ըմպելիներու և ծխախոտի գործածութեան վնասները ցոյց տուող պատկերներ:

4.— Իպրոցին կից, զանազան հանդէսներու, բանախօսութեանց կամ հասարակական հաւաքոյթներու համար ժողովարահ մը պէտք է շինուի, մէջն ունենալով փոքրիկ գրադարան մը երկրագործութեան, աղագլին պատմութեան ու առողջապահութեան վերաբերեալ դիւրահասկնալի գիրքերով և երկրագործական ու առողջապահական թերթերով: Այս սրահին մէջ պէտք է գտնուի նաև գիւղական փոքրիկ դեղարան մը: Իպրոցը պէտք է ունենայ պարտէզ. բանջարանոց մը, ուր վարժապետը որոշեալ ժամերուն պէտք է աշակերտներուն սորվեցնէ գանազան ծաղիկներու և բանջարեղէններու մշակութեան կերպը: Պարտէզի բերքին հասոյթը պէտք է վարժապետին յատկացուի:

5.— Գիւղը պէտք է ունենայ 4 խանութ, այսինքն 1 նպարավաճառ, 1 երկաթագործատաղաճագործ, 1 զանազանք և 1 սրճարան, ուր սակայն ողբից ընպելիք բացարձակապէս արգիլեալ ըլլալով, պէտք է ճատակարարել ճիշտ սուրճ, թէյ, օշաւրակ և ասոնց նման բաներ: Այս խանութներու եկամուտէն պէտք է հողացուին վարժապետին և վարժուհիին թոշակները:

6.— Անժխտելի է աղօրիքի ճը անհրաժեշտութիւնը գիւղացւոց հացահատիկները աղալու համար: Նայելով տեղական պայմաններուն և հնարաւորութեանց, աղօրիքը կրնայ ըլլալ ջրաղաց, հողմաղաց կամ նոյնիսկ ելեքտրաղաց: Աղօրիքը վարձու աըրուելով աղօրեպանի ճը, վարձքէն գոյացած հասոյթը պէտք է յատկացուի քահանային:

7.— Գիւղին մէջտեղը պէտք է շինուի մեծ աղբիւր ճը, որուն քով գտնուելու է կենդանիներ ջրելու գուռ մը և լուացքի համար բաւականաչափ աւազան մը:

8.— Գիւղացիներու հացին պատրաստութեան համար անհրաժեշտ է հասարակաց փուռ մը, որու վառելափայտը իրենք պէտք է հայթայթեն:

9.— Փուռին քով պէտք է գտնուի բաղնիք մը, ուր ընտանիքի մայրեր պարտաւոր ըլլան լուալ իրենց զաւակները գէթ ամիսը մէկ անգամ: Ասոր համար հարկ եղած վառելափայտն այ գիւղացիք պէտք է հայթայթեն:

Այս գիւղը կամ գիւղերը պէտք է յատկացուին Թրքահայաստանէն եկած գաղթականներու, այն պայմանաւ որ ասոնք արդէն իրենց երկրին մէջ հողագործութեամբ զբաղած լինին բացարձակապէս, և նախնական ու գործնական քննութենէ մը յետոյ միայն ընդունուին: Նախքան իրենց տեղերը հաստատուիլը, պէտք է բժշկական քննութեան ենթարկուին, որու շնորհիւ միայն կարելի է մերժել սիֆիլիթիքներն ու թոքախտաւորները:

Վ ա Ր Ժ ա պ ե ս ք

Գիւղին վարժապետին ընտրութիւնը շատ կարևոր լինելուն, պէտք է ընտրել լրջախոհ և իր պաշտօնին գիտակից անձնաւորութիւն մը, որպէս զի կարենայ օգտակար ըլլալ ո՛չ թէ միայն տղայոց կրթութեան և դաստիարակութեան գործին, այլ նաև գիւ-

դացիներուն, որովհետև յաճախ տեսնուած է որ թեթեւաբարոյ ուսուցիչներ իրենց յախուռն արարքներով և զաղափարներով գիւղացւոց մէջ գժտութեան և անկարգութեան պատճառ կ'ըլլան և այդու վնասակար կը դառնան գիւղին:

Կենդանիներ

Ամէն մէկ ընտանիքի պէտք է տրուի 2 կով կամ գոմէշ, 2 այծ կամ մաքի (ոչխար), 1 մատակ խոզ, 10 հաւ, 2 փեթակ, 2 ճագար:

Գիւղացւոց տրուած կովերու, գոմէշներու, ոչխարներու և այլն զեղը ազնուացնելու համար, գիւղացիներէն մէկին կամ միւսին քով ի պահ պիտի դրուին ցօլ մը, նոխազ մը, գոմէշ մը, խոյ մը, արու խոզ մը և արու էշ մը:

Երկրագործական գործիներ

Ամէն ընտանիքի պէտք է տրուի 3-5 տեսիազին վարելահող, բաւականաչափ գործիք, գութան, արօր, տափան (Herse), լոլ (Rouleau), գերանդի,

մանգաղ և այլն: Բնականաբար գիւղին պիտի տրամադրուի նաև tracteur մը հնձող մեքենայով և կամիւն (Batteuse) մը: Ամենաընտիր տեսակէն սերմնցու պէտք է տրուի և այդ նպատակաւ ընդհանուրին համար պիտի տրամադրուի զփիջ մը (Trieur) և երերոց մը (Tarare):

Շերտմարուծութիւն

Շերտմարուծութիւնը ծաղկեցնելու և դիրացնելու համար ձրիաբար գիւղացիին պէտք է տրուի բաւականաչափ թթենիի տունկ, պարտաւորիչ կերպով արտին շուրջը տնկելու համար, որպէս զի կարողանայ գէթ մէկ տուփ (25 կրամ) հումա մեծցնել:

Տարեկան տեղեկագիր մը պէտք է ցոյց տայ արդիւնքը և քանակը:

Պատգաու ծառեր

Զանազան տեսակ և բաւականաչափ պտղատու ծառեր պէտք է տրուին ամէն գիւղացիի, ինչպէս

խնձորենի, ծիրանի, տանձենի եւ կլիմային շարձա-
րող ուրիշներ ալ, որթատունկ եթէ կարելի է: Գա-
լով ընկուղենիին, ամէն տնտր պարտաւոր պիտի
ըլլայ գոնէ 5 ծառ տնկել, որովհետեւ թէ՛ իբր սը-
ննդարար ու համեղ աղանդեր եւ թէ իբր իւղատու
պտուղ այնքան մեծ է ընկուղի կարեւորութիւնը,
որ գրեթէ անկոխարինելի է, թող որ վաճառելու
համար ալ խիստ արդիւնաբեր է:

Ա Ն Տ Ա Ն

Ի նկատի առնելով որ գիւղացիք, վառելիքի
չզոյութեան պատճառաւ, փուռերը տաքցնելու, կե-
րակուրները եփելու և ձմեռը տաքնալու համար
կենդանեաց թրիքը կը գործածեն, ինչ որ մեծ վը-
նաս է հողերու պարարտութեան հայեցակէտով,
պէտք է գիւղին ծոռ տնկել անտառակ մը: Պէտք
է ուրեմն, որ իւրաքանչիւր գիւղացի պարտաւոր
ըլլայ տարին գոնէ 10 հատ անտառի յատուկ մատ-
ղաջ ծառ տնկել մինչեւ 10 տարի կառավարութե-
նէն տրուելիք առանձին հողին վրայ. ծառերն ալ
ձրի պիտի բաշխուին: Ամէն տարի, շա-

բաթը անգամ մը գիւղացիք պէտք է ջրեն նոր
տնկուած ծառերը և զնասակար խոտերը մաքրեն:

Անտառակը պէտք է շրջափակուած ըլլայ եր-
կաթ թելով, որպէս զի կենդանի չի մտնէ. ծոռաւու-
րապէս 15-20 տարի յետոյ չորցած ճիւղերը կտրե-
լով կարելի է իբր վառելափայտ գործածել: Իսկ
ապագային, երբ ծառերը կտրուելու տարիքն ունե-
նան, գիւղացիք իրաւունք պիտի ունենան ատաղձէն
օգտուելու երկրագործական գործիները նորոգելու
կամ շինելու, ինչպէս նաև իրենց տուները ընդար-
ձակելու համար: Երբ ծառերը որոշեալ բարձրու-
թեան հասնին, կարելի է թոյլ տալ որ կենդանիներն
ամառուան եղանակին երթան հանգչին շուքին
տակ, ինչ որ մեծապէս օգտակար է կենդանիներու
առողջ ըլլալուն և մանաւանդ արևահար ջըլլալուն:
Երբ ժամանակն հասնի ծառերը կտրելու և վա-
ճառելու, հասոցթի գումարը պէտք է յատկացուի
գիւղին զանազան պէտքերուն:

Գիւղի հասարակութեան վերաբերեալ հազարմաս

Կառավարութենէն պէտք է խնդրել 5 տեսի-
ղին հող, որ պիտի պատկանի ամբողջ գիւղացւոց և

ուր իրենք պիտի կատարեն ամէն աշխատանք, վարուցան, քաղուհան, հնձել, կամեել, մաքրել եւն: Բերքին վաճառուձէն գոյացած դրամով պէտք է վճարուին գիւղին ամէն կարգի տուրքերը: Եթէ գունձոր մը աւելնայ, զայն եւս պէտք է գործածել դպրոցի, եկեղեցիի կամ զանազան հասարակական պէտքերու համար: Ուստի հասարակաց օգտին համար եղած այս գործելակերպը պէտք է ստիպէ բոլոր գիւղացիները զալ աշխատիլ տարին 5 օր միայն իրենց կենդանիներով:

Այս հողամասին վերին տեսչութիւնը պիտի լանձնուի երկրագործական այցելու քննիչին, որու հրամանները պիտի գործադրուին գիւղի վարժապետին միջոցաւ: Վարժապետը պարտաւոր պիտի ըլլայ տարին առնուազն 5 օր իր աշակերտները տանիլ հասարակաց հողին վրայ, քարերը ժողվելու կամ փոքր աշխատանքներ ընել տալու համար, եւ որու փոխարէն պիտի ստանայ զօտ հասոյթին 5 առ 100ը, եթէ մանաւանդ խանութներու հասոյթը բաւական չըլլայ թողակը փակելու:

Երկրագործական ԲՅՈՒՅ

Պէտք է նշանակուի վճարեալ, կարող, գործնականի հմուտ հողագէտ մը, որ 15 օրն անգամ մը զիւր գալով արտերն այցելէ և ճշակման կերպերը քննէ, գործնական խորհուրդներ տայ և ի պահանջել հարկին կատարէ այն դարձանները որոնք անհրաժեշտ են բոյսերը գերմ պահելու համար զանազան հիւանդութիւններէ: Նա տարեկան տեղեկագիր մը պէտք է պատրաստէ գիւղին արտադրութեանց, ծախուած քանակութեանց և գիներու մասին:

Բ Ճ Ի Օ Կ

Գիւղը պէտք է ունենայ վճարեալ, փորձառու և կարող այցելու բժիշկ մը, որու պարտականութիւնը պիտի ըլլայ շաբաթը մէկ անգամ, գիւղ գալ ձրիաբար հիւանդները դարձանելու և երեխաներու առողջապահական վիճակը քննելու համար, անմիջական կերպով օգտուելով գիւղին դեղարանէն: Պէտք է նաև այցելէ ամէն տուն, և եթէ հակառոցմապահական բան մը նկատէ, հարկ եղածը անօրինէ:

Մասնաւոր ուշադրութեան առարկայ պիտի ըլլան փոքրիկները, որոնց ճայրերուն պէտք է խորհրդատու լինի: Հասարակաց սրահ ճը տրամադրելի ըլլալով, դիրահասականալի լեզուով դաստիսուութիւններ ընելու է:

Բժիշկը պարտաւոր է ամէն 3 ամիսն անգամ ճը տեղեկագիր ճը պատրաստել և ներկայացնել առոր անկ է. այդ տեղեկագրին ճէջ պէտք է յիշուին պատահած ու դարձանուած հիւանդութիւնները և ճնունդներու և ճահերու վիճակագրութիւնը (սթատիսթիքը). ապա պէտք է պատրաստէ տարեկան ընդհանուր տեղեկագիրը:

Ա ճ ա ս ճ ա բ ո յ ծ

Թոշակաւոր, կարող ու փորճաւոր, վկայեալ անասնաբոյճ ճը պէտք է ընտրուի, որու պարտականութիւնը լինի շաբաթն անգամ ճը գիւղ գալ և ամբողջ կենդանիները քննել, հիւանդները դարճանել, կենդանեաց ցեղին ազնուացճան հաճար պէտք է ղաճ խորհուրդները տալ, և վերջապէս, նախորդին նճան, 3 ամիսն անգամ ճը տեղեկագիր ճը պատ-


րաստել, յիշելով պատահած հիւանդութիւնները, եղաճ դարճանները, ճիւած ու ճեռաճ կենդանիներու սթատիսթիքը: Իր պատրաստած սթատիսթիքին ճէջ գլխաւորաբար պէտք է նշանակէ աճուճը, վաճառուճը, ինչպէս նաև բուրդի, իւղի, պանիրի քանակութիւնը օրուան գիներով ճիասին: ճարեկերջի ընդարճակ տեղեկագիրը պէտք է տայ առ որ անկ է:

Անճիջական ղարճանումներու հաճար գիւղին ճէջ պէտք է գտնուին անհրաճեղտ դեղեր:

Մ ր ց ա ճ ա կ ճ ե ր

1.— Բճիշկին ու դարոցի վարճապետին տուաճ տեղեկագրին վրայ այն ճայրը որ իր գաւաակները ճիջտ ճաքուր կը պահէ, պիտի ստանայ տարեկան 5 անգլ. ոսկիի պարգեւ ճը:

2.— Այն ճայրերը, որոնք առաջին երեք տարիներու ընթացքին 6է աւելի կենդանի գաւակ ունին, ղաճէն ճէկ աւելիին հաճար 5 անգլ. ոսկի պարգեւ պիտի ստանան: Օրինակ, ճարեկերջի գաւակ ունի, վերջին 4 գաւակներուն հաճար 20 անգլիական ոսկի պիտի ստանայ:



Handwritten notes in Armenian: 976, 326, 487, 45, 58, 25.

3. — Անասնաբույժի անգեղագրին Համեմատ, այն գիւղացին որ իր կենդանիները ծաքուր կը պահէ և լաւ կը սնուցանէ, տարեկան 5 անգլ. ոսկի պարգեւ պիտի ստանայ:

4. — Այն գիւղացին, որ ըստ երկրագործական քննիչի տեղեկատուութեան, իր հողը լաւ կը հերկէ, լաւ կը պատրաստէ ու կ'աղբէ, և որու հողային հասոյթը ամենէն զօրեղն ու առատը կ'ըլլայ, 5 անգլ. ոսկի պարգեւ պիտի ստանայ:

5. Մասնաւոր վարձատրութիւն ճը պիտի տրուի, 10 անգլ. ոսկի, այն գիւղացիին, որ պատերազմական հրացանով նշանաւորութեան և ճրցման ձեջ առաջնութիւնը պիտի վաստկի:

Վերոյիշեալ 5 ճրցանակները առաջին 3 տարուան համար ծիայն պիտի տրուին:



Ընդհանուր ծախս մէկ տնտեսութեան համար

24 տուն, իւրաքանչիւրը 150 ա. ոսկի	ա.	ո.	3600
4 խանութ	»		200
Մատուռ	»		200
Դպրոց	»		300
Հասարակաց սրահ	»		150
Աղօրիք	»		250
Աղբիւր և յարակից ձաները	»		150
Փուռ	»		50
Բաղնիք	»		100
Թրաքթոր (Tracteur) և հնձիչ (moissonneuse)	»		400
Կամնիչ (Batteuse) գոթիչ Trieur և լն.	»		200
Փոխադրելի	»		5600

փոխադրեալ

ա. ո. 5600

Իւրաքանչիւր սնունդի համար ծախքեր

Կենդանիներ. —

2 Կով կամ 2 գոմէշ ա. ո.	25	
1 Խոզ	»	5
2 Ոչխար կամ այծ	»	4
1 Մատակ էջ	»	6
2 Փեթակ	»	4
10 Հաւ և 2 ճագար	»	2
Գումար	»	<u>46</u> × 24 = » 1104

Ընդհանուրին պահանջող ծախքեր

Կենդանիներու սերնդագործութեան համար

Այնի տեսակէ 1 ցուլ	ա. ո. 20	
» 1 ցուլ գոմէշի	» 20	
» 2 խոզ	» 10	
» 2 նոխազ	» 10	
» 1 արու էջ	» 10	
» 1 արու խոզ	» 15	
Գումար	»	<u>85</u> » 85
փոխադրելի	»	<u>6789</u>

փոխադրեալ

ա. ո. 6789

Երկրագործական գործիք իւրաքանչիւր տունի

1 Արօր	ա. ո. 4	
1 Տափան (herse)	» 3	
1 Լոյ	» 4	
2 Մանգաղ 1 Գերանդի	»	
1 Խորցնող արօր (sous-soleuse)	» 3	
1 Սայլ	» 10	
Զանազանք	» 4	
	»	<u>30</u> × 24 = » 720

Սերմնցու իւրաքանչիւր

ընտանիք » 6 × 24 = » 144

Կահկարափ » 30 × 24 = » 730

Սննախատեսելի (յիշատակութեան համար) » 127

Հասարակաց աղբանոցին շինութեան
(24 բաժին) » 300

Համագումար

8800

Հարեկան ծախք

Բծիշկին տարեթոշակ	ա. ո. 60	
Դեղ	» 10	
Անասնաբույժ	» 60	
Դեղ (կենդանիներու համար)	» 10	
Երկրագործական քննիչ	» 50	
	» 190	ա. ո. 190
 ԾԱՆՕՑ.— Վերոյիշեալ Թոշակները հաստատուած են ի մտի ունենալով կառավարական պաշտօնեաները:		
Հասարակաց հողամասին համար ծախքեր		
1) Գիմիական աղբեր 2-3		
տեսակ	ա. ո. 40	
 Տարեկան ճրջանակներու		
1) Հողագործական ճրջանակ	» 5	
2) Կենդանեաց ճրջանակ	» 5	
Տղոց ձաքրութեան համար		
ճրջանակ	» 5	
 Տուներու առողջապահու-		
թեան ճրջանակ	» 5	
Նշանառութեան ճրջանակ	» 10	
 Բազմազաւակ մայրերու ճր-		
ջանակ (յիշատակութ. հմր.)	» 50	120
համազուճար	»	ա. ո. 310

ԾԱՆՕՑ. Վերջին 310 ա. ո.ի ծախքը առաջին երեք տարուան համար է միայն, կը յուսանք որ անկէ յետոյ կառավարութիւնը հարկ եղածը կը անօրինէ:

Ի նկատի ունենալով որ գիւղացին հազիւ առաջին 2 տարիներէն վերջ կրնայ հաւասարակշռութիւնը գտնել ու ոտքի կանգնիլ, ուստի այդ տարիներու ընթացքին թէ՛ իբր քաջակերութիւն և թէ օգտակար լինելու համար. գիւղացին պէտք է տալ, ամէն մէկ դեսիադինի համար 300 քիլօկրամ նիթրաթ, այսինքն 22500 քիլօկրամ որ կ'արժէ 300 ա. ո., ուրեմն երկու տարուան համար 600 սակի: Այս բոլոր ծախքերը 10 առ 100 աւելի կամ նուազ կրնան ըլլալ:

Բնդիւանուր ծախքօրէքիւց

1.— Այն հարուստները, որոնք կը փափաքին այսպիսի տիկար գիւղ մը հաստատել եւ կը մտածեն թէ որու միջոցաւ ի պլուրի հանեն զայն, և որ մարմնի հսկողութեան տակ զնեն, այդպիսիներուն կը յանձնարարենք բարեացակամութիւնն ու միջնորդու-

թիւնը Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, որ իր ներկայացուցիչն ունենալով Հայաստանի մէջ, սիրով յանձն կ'առնէ սոյն շինարարութեան վսեմ գործը:

2. — Ի նկատի ունենալով որ սխալ է ժողովուրդը ճիշտապէս վարձեցնելը, և, ընդհակառակն, որպէս զի գիւղացիք որոշեալ ժամանակէն վերջ բոլորովին տէր դառնան իրենց տունին, գործիքներուն և կենդանիներուն, պարտական պէտք է ըլլան, չորրորդ տարիէն սկսեալ, իրենց համար կատարուած այս գոհողութիւնը 25 տարիէն ճաս առ ճաս վճարել առանց ո եւ է տոկոսի: Ուստի կ'առաջարկեմ, որ ամէն գիւղացի չորրորդ տարիէն սկսեալ 25 տարի շարունակ տարեկան 15 ա. ո վճարէ այն անձին կամ հաստատութեան, որու յանձնուած է գիւղին վերին հսկողութիւնը: Այդ ձևով հաւաքուած գումարով կարելի է ուրիշ նմանօրինակ գիւղեր շինել յառաջիկային:

3. — Գիւղը, Կարցը և ճատուռը պէտք է կոչուին այս գոհողութիւնն ընող բարերարին կամ անոր ընտրած անունով, որպէս զի յաւերժական երախտադիտութեամբ յիշուի այն:

Վարժապետը տարին մէկ անգամ պէտք է բանախօսութիւն մը ընէ գիւղը հաստատող միութեան կամ բարերարին գործը գովաբանելու համար:

4. — Հաւանական է որ մէկը առարկութիւն ընէ այս գիւղին համար կամիւզ (Batteuse) մեքենայ մը յատկացուցած ըլլալու համար, ուստի թոյլ տրուի բացատրել այստեղ, թէ նախնական միջոցներով և դանդաղօրէն կալ ընելու սովորութիւնը շատ մեծ կորուստներ կը պատճառէ գիւղացիին, զոր օրինակ եղանակի անպատեհութիւնները՝ անձրեւները, մուկերու և թռչուններու տուած վնասը՝ հատիկներու կարելոր մէկ տոկոսին ցիր ու ցան փճանալը ևն. ևն., մինչդեռ շնորհիւ կամիւզ մեքենային, ամբողջ գիւղացւոց բերքը՝ մէկ շաբաթուան մէջ կարելի է կամել և հատիկները ամբարել: Չմոռնամ նաև կրկնել որ, Tracteurի Batteuseի ևայլնի վերաբերեալ՝ ծախքերը գիւղացւոց կողմէ պէտք է վճարուին: Կարելի է միեւնոյն մեքենան յատկացնել նաև մօտակայ գիւղերուն:

Իսկ եթէ առարկուի թէ 8800 ոսկիով 24 տունի փոխարէն 50 կամ 60 տուն շինել կարելի է,

ի սլատասխանի կ'ըսեմ թէ ճիշտ է, բայց մոռնալու
չէ որ այս *հիպար գիւղի* ճը ծրագիրն է. յետոյ,
գիւղացւոց տուն տալ բաւական չէ, այլ անհրաժեշտ
է նաև հայթայթել կենդանի, գործիք, սերմնացու եւ
կարասիք, նոյնիսկ 10 ամսուան պաշար, որուն հա-
ճար ալ պէտք է նախատեսել շուրջ 500 սակիի
ծախք ճը:


Ընթերցողը չի յոգնեցնելու հաճար զանց ըրինք
շատ ճը ճանրամասնութիւններ սակայն աւելի ըն-
դարձակ տեղեկութիւններ առնել ուղղը կրնայ զի-
մել ճեղի:

**Ո՛Վ ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏ. ԵԹԷ ԿՈՒՋԵՍ
ԱՆՈՒՆԳ ՅԱԻԵՐԺԱՅՆԵԼ ԵՒ ՀԱՅՐԵ-
ՆԻՔԻԳ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆ ԳՈՐԾ ՄԸ ԿԱՏԱՐԵԼ,
ԱՃԱՊԱՐԷ՛ ԳԱՆԻ ԴԵՌ Ի ԿԵԱՆՍ ԵՍ:**

Ե. Ա. Ղ. Ա. Թ. ՕՆ

Հոդագէտ

Հիմնադիր եգիպտոսի հոդագործներու
Միութեան և Բնիկ անասնոց
հոգ. Միութեան



Փարիզ, 1 Յուլիս 1926

«Ազգային գրադարան»



NL0288177

66

15038



Գեղարուեստիկան Էայ Տպարան
Imp. ARTISTIQUE, 42, Rue de la Jonquières
PARIS (17.)